ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի հուլիսի 3-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դիանա Ռոբերտի Գալոյանի**, ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Վարդանի Գրիգորյանի**, ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյանի**, ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գրիգոր Արշամի Նազարյանի** համահեղինակությամբ **«ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկի»** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ձեռնարկն ունի կարևոր նշանակություն բուհում շահակիցների փոխհամաձայնեցված, ընդհանուր արժեքներ կիսելու վրա հիմնված հաստատուն միջավայր զարգացնելու համար: Ձեռնարկը հաջորդաբար անդրադառնում է որակի ապահովման ներքին համակարգի բոլոր հանգուցային բաղադրիչներին՝ դրանք դիտարկելով, մի կողմից, բարձրագույն կրթության բարեփոխումների լայն համատեքստում, մյուս կողմից՝ ՀՊՏՀ-ում վերջին տարիներին այդ ուղղությամբ կատարված կարևոր քայլերի շրջանակում: Հետևողականորեն, տրամաբանական կուռ շղթայով ներկայացված է որակի ապահովման բուհում առկա համակարգը, վերջինիս առանձնահատկությունները, անդրադարձ է կատարվում որակի ապահովման ուղղությամբ ձևավորված եվրոպական քաղաքականությանն ու պրակտիկային, առանձին ուշադրություն է հատկացվում կրթական ծրագրերի որակի հավաստման գործընթացներին և, որ կարևոր է, դասավանդման, ուսումնառության և գնահատման խնդիրներին, որոնք, ըստ էության, հիմքն են կազմում բուհի որակի ապահովման ողջ համակարգի:

Ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 2 դրական կարծիք.

1. Ս.Բ.Կարաբեկյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի գլխավոր խորհրդական, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

2. Ն.Ա.Գևորգյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆոնդահայթայթման բաժնի պետ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ձեռնարկը շարադրված է մասնագիտական, բայցև մատչելի լեզվով, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնելու դրանից օգտվողների շրջանակը, առաջին հերթին ուսանողներին: Այն նախատեսված է ինչպես ուսանողների, այնպես էլ ասպիրանտների, ակադեմիական կազմի, կառավարման մարմինների, ուսումնաօժանդակ ու վարչական կազմի աշխատողների, ոլորտի հետազոտողների համար և կարող է նպաստել որակի մշակույթի զարգացմանն ու առավել բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները՝ ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դիանա Ռոբերտի Գալոյանի**, ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Վարդանի Գրիգորյանի**, ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյանի**, ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գրիգոր Արշամի Նազարյանի** համահեղինակությամբ **«ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկը»** երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. հուլիսի 3
Երևան